Հինգերորդ հաղորդում

Կենդանի քարեր և ոչխարներ

Գրվածքների ընթերցում. Ա Պտ 2:4-5, Զք 3:9, 4:10, Հվի 10:11-16, Եզկ 34:11-31

I. Հավատացյալները խորհրդանշվում են կենդանի քարերով՝ նրանցով, որքեր փոխակերպվում են Քրիստոսի քարե բնությամբ՝ Աստծու հոգևոր տունը լինելու՝ Ա Պտ 2:4-5.

Ա. Մենք՝ Քրիստոսին հավատացողներս, վերածննդի և փոխակերպման միջոցով Քրիստոսի նման կենդանի քարեր ենք. մենք կավից ենք ստեղծվել (Հռմ 9:21), սակայն վերածննդի ժամանակ ստացել ենք աստվածային կյանքի սերմը (Ա Պտ 1:23-24), որը, մեր մեջ աճելով, մեզ կենդանի քարերի է փոխակերպում.

1. Պետրոսի դարձի գալու ժամանակ Տերը նրան նոր անուն տվեց՝ «Պետրոս», այսինքն՝ «քար» (Հվի 1:42), և երբ Պետրոսը Քրիստոսի վերաբերյալ հայտնություն ստացավ, Տերը նրան, ի հավելում դրա, նաև բացահայտեց, որ Ինքը վեմն է, այսինքն՝ քար (Մտթ 16:16-18):
2. Այս երկու իրադարձությունների շնորհիվ Պետրոսն այն տպավորությունը ստացավ, որ թե՛ Քրիստոսը, թե՛ Նրա հավատացյալները քարեր են Աստծու կառույցի համար՝ Ա Պտ 2:4-5:

Բ. Քրիստոսն Աստծու կառույցի կենդանի քարն է, հիմնաքարը, անկյունաքարը և վերնաքարը. Աստծուց ծնվելով՝ Քրիստոսի հավատացյալները փոխակերպվում են կենդանի թանկագին քարերի եկեղեցու՝ որպես Աստծու հոգևոր տան կառուցման համար՝ խ. 4, Ա Կրթ 3:11, Եսյ 28:16, Գրծ 4:11, Զք 4:7, Հվի 1:12-13, 42, Ա Պտ 2:5-7, Ա Կրթ 3:12, Մտթ 16:18:

Գ. Քրիստոսը՝ որպես քար, յոթ աչքեր ունի, որոնք խորհրդապատկերում են Աստծու յոթ Հոգիներին՝ յոթնապատիկ ուժեղացված Հոգուն (Զք 3:9, 4:10). յոթնապատիկ ուժեղացված Հոգին խորհրդապատկերված է նաև Գառան յոթ աչքերով (Հյտ 5:6) և Աստծու գահի առջև վառվող կրակե յոթ ճրագներով (4:5).

1. Ճրագները լուսավորելու, զննելու, մերկացնելու, դատելու և այրելու համար են, իսկ աչքերը՝ ներարկելու. յոթ աչքերը այն ամենը, ինչ Գառ-քարն է, ներարկում են մեր էության մեջ՝ մեզ Նրա ոսկե ճրագակալը դարձնելու համար՝ Զք 4:2-6, 11-14:
2. Որպեսզի դառնանք կենդանի քարեր, մենք պետք է Նրա մոտ գանք և թույլ տանք Նրան նայել մեզ. լուսավորելուն և դատելուն զուգընթաց Տերը նայում է մեզ և Իրեն ներարկում մեր մեջ՝ Իր պատկերին մեր փոխակերպվելու համար. մենք բոլորս պետք է լինենք յոթ ճրագների լուսավորման, յոթ աչքերի հայելու և յոթնապատիկ ուժեղացված Հոգու՝ կյանք ներդնելու ներքո:
3. Երբ Քրիստոսը՝ որպես Աստծու շնորհքի կենդանի քար, ներդրվում է մեր էության կազմության մեջ Նրան ապրելու մեր սուբյեկտիվ

փորձառության միջոցով, Նա դառնում է մեր բարձը մեր հանգստի համար, որպեսզի մեզ սյուն դարձնի Աստծու կառույցի մեջ՝ Ծնդ 28:11-12, 17-19ա, Ջք 4:7, Մտթ 11:28-30, Հվի 1:16-17, 51:

Դ. Ի վերջո ընդհանրական Քրիստոսը՝ Քրիստոսն Իր հաղթող հարսի հետ միասին, կգա որպես քար՝ մարդկային կառավարման հանրագումարը փշրելու համար, որպեսզի բերի Աստծու թագավորությունը՝ Դնլ 2:34-35, Հվլ 3:11, Հյտ 19:11-21, հմմտ Ծնդ 1:26.

1. Քրիստոսի բերանից սրած սուր էր ելնում, որպեսզի դրանով Նա հարվածի ազգերին՝ Հյտ 19:15ա, հմմտ 1:16, 2:12, 16:
2. Որպեսզի կազմվենք Քրիստոսով ու Նրա հետ միաձուլվենք՝ դառնալով ընդհանրական հարվածող քարը՝ Նրա ընդհանրական ռազմիկ-հաղթողը, մեզ հարկավոր է սպանող խոսքը, որը վերջ է դնում թշնամուն. մենք պետք է աղոթքաընթերցենք Խոսքը, որպեսզի փորձառաբար ապրենք սուրը՝ որպես սպանող գործիք՝ Եփս 6:17-18:

II. Հավատացյալները խորհրդանշվում են ոչխարներով՝ նրանցով, ովքեր Քրիստոսի օրգանական հովվության ներքո են՝ Հվի 10:11-16, Սղմ 23:1, Մտթ 9:36, Եբր 13:20.

Ա. Տերն Ինքը գալիս է որպես Հովիվ, որպեսզի փնտրի Իր ոչխարներին ու որոնի նրանց՝ Եզկ 34:11-31, Ղկս 15:3-7, Հյտ 7:17, Հվի 21:15-17, Ա Պտ 2:25, 5:3-4:

Բ. Տերն Իր ոչխարներին բերում է իրենց իսկ երկիրը և բարձր լեռները. երկիրը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես Քանանի երկրի, իսկ բարձր լեռները խորհրդապատկերում են հարուցանված ու համբարձված Քրիստոսին՝ Եզկ 34:13-14, Կղս 1:12:

Գ. Տերն Իր ոչխարներին վերադարձնում է հոսքերի մոտ, որոնք խորհրդապատկերում են կենդանարար Հոգուն, և Նա կերակրում է Իր հոտը հոսքերի մոտ. դա նշանակում է, որ Նա հավատացյալներին կերակրում է Իր հարստությամբ՝ Եզկ 34:13, Հյտ 22:1-2ա, Ա Կրթ 12:13, Սղմ 36:8:

Դ. Տերն Իր ոչխարներին վերադարձնում է բարի և հարուստ արոտավայրը, որը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես մեր կենսամատակարարման, և պառկեցնում է նրանց, ինչը ցույց է տալիս, որ Նա նրանց ներքին հանգիստ է տալիս՝ Եզկ 34:14-15, Սղմ 23:2, Հվի 10:9, Մտթ 11:28-30:

Ե. Տերը վիրակապում է կոտրվածին և ամրապնդում հիվանդին. Իր փայփայելու և սնելու միջոցով Նա այնպես անում, որ ամեն տկար ոչխար ճակատամարտում եղող վեհաշուք ձի է դառնում՝ Եզկ 34:16ա, Ջք 10:3, 11:7:

Զ. Տերն արդար դատաստաններ է իրականացնում, որպեսզի հեռացնի բոլոր անարդարացի բաներն Աստծու վերականգնված ժողովրդի միջավայրից. Նա, ով սնում ու մատակարարում է մեզ, մեզ օգնում է անսխալական կերպով զգալու, թե ինչպիսին են ուրիշների հետ մեր փոխհարաբերությունները. երբ մենք նման զգացում ենք ունենում, դա-

տում ենք մեզ և արդյունքում իսկական միասնություն ենք ունենում սրբերի հետ որպես մեկ հոտ՝ Եզկ 34:17-22, Կղս 3:15:

Է. Քրիստոսը՝ որպես իրական Դավիթը, նշանակված է որպես իրական Հովիվ, որպեսզի հովվի մեզ և հագեցած ու բավարարված լինել տա. Նա հոգում է մեզ համար, մասնավորապես՝ մեր բոլոր խնդիրների ու պարտականությունների համար և մեր ապրելակերպի ամեն մի տեսանկյան համար. մեզ համար Տիրոջ՝ որպես մեր Հովվի հոգալու արդյունքը լինում է մեր հնազանդվելը Նրան՝ որպես մեր Թագավորի, և ենթարկվելը Նրա թագավորմանը՝ Եզկ 34:23, Սղմ 23, Հյտ 7:17, 22:1-2ա:

Ը. Երբ փորձառաբար ապրում ենք Տիրոջ հովվությունն ու Նրա թագավորման ներքո մնում, մենք վայելում ենք Նրա խաղաղության ուխտը, որն ապահով ու անփոփոխ է, և այլևս ենթակա չենք լինում հոգևոր անախորժությունների և անհանգստությունների՝ Եզկ 37:24-28.

1. Նրա հովվության ներքո բոլոր չար գազանները՝ չար անճերը, հեռացվում են Տիրոջ վերականգնված մարդկանցից՝ 34:25ա, հմմտ Գրծ 20:28-29, Փլպ 3:2-3:
2. Նա կոտրում է մեր լուծը, մեզ ազատագրում ստրկությունից ու խոստանում, որ մենք թշնամու ավարը չենք լինի, այլ կապրենք խաղաղությամբ և ապահովությամբ՝ Եզկ 34:25բ, 27բ-28:

Թ. Տիրոջ հովվությունը փորձառաբար ապրելու շնորհիվ Աստծու վերականգնված մարդիկ ունենում են Աստծու ներկայությունը, Աստված նրանց միջավայրում է, և նրանք Աստծու առջև են. սա պատկերում է կատարյալ հաղորդակցությունն Աստծու հետ՝ միասնության մեջ եղող հաղորդակցությունը, Աստծու և մարդու միաձուլման մեջ, որում մենք մեկ ենք Աստծու հետ, իսկ Նա մեկ է մեզ հետ՝ խխ. 30-31:

Ժ. Իր հովվության միջոցով Տերը մեզ բերում է Իր օրհնության վայելքի մեջ և մեզ օրհնության ակունք դառնալ տալիս օրհնության տարափների ներքո՝ խխ. 26-27ա, 29, Ծնդ 12:2-3, Հռմ 15:29, Բ Կրթ 1:12, 15, Զք 10:1.

1. Թվց 6:23-27-ի օրհնությունը, ինչպես և Բ Կրթ 13:14-ի օրհնությունը, Եռամեկ Աստծու հավիտենական օրհնությունն է, որը Եռամեկ Աստված է, ով Իրեն Իր Աստվածային Երրորդության մեջ բաշխում է մեր մեջ մեր վայելքի համար:
2. Որպեսզի ստանանք Տիրոջ օրհնությունը, պետք է կիրարկենք միասնությունը, իսկ միասնության կիրարկումը միաբանությունն է՝ Սղմ 133, Եփս 4:3-4ա, Գրծ 1:14, 2:46, Հռմ 15:5-6:

© 2026 Living Stream Ministry